

- 82 Նոյն սրգատեսիլ յուղարկման թափօր
Մեծաւ հանդիսիւ ըսկըսեալ զայն օր՝
Ձամբօն քաղաքիս որ շատ բիւրաւոր
Հաւաքէր իսկոյն ի մի վայր բոլոր:
- 83 Բազմախրմբական հանդէսն այն տըխուր
Խաչիւ խաչվառաւ ջահիւք յառաջիւր,
Հաւատացելովք մարտկօք հետեւիւր
Եւ Ուխտի մանկամբք դեսպակաւն հզրիւր:
- 84 Գազաղն այն բարձիւր անդ ի թափօրին
Յերկոտասանից երիցանց լատին,
Զօր վառեալ զինւորք շըրջապատէին,
Եւ մոմեղինօք Հայք բոլորէին:
- 85 Խումբ լատինացի կըրօնաւորաց,
Եւ քահանայից ողջ Ուխտի մանկանց,
Յառաջընթաց լեալ Հայոց երիցանց,
Երգէին դաս դաս ըստ ծիսի իւրեանց:
- 86 Հանդիսայարդար եւ թափօրիս պետ՝
Էր այն Գերյարգոյ Տէր Հայր Կարապետ,
Որ Հայոց տեղւոյս ժողովրդապետ,
Եւ սուրբ Տաճարիս մեր հանդերձապետ:
- 87 Սա ունէր ընդ իւր ընկեր ւ՝ երգաբան
ԸզՊետրոս րաբունն՝ որ Մուրատճայեան,
Եւ զեւ՝ որ էի յայն հանդիսարան
Յոյժ տըրտմահաղորդ փըղձկեալ լալական:
- 88 Անդ մէք ըզպաշտօն հօգւոց հանգուցեալ,
Ըստ ծիսի մերում ողբաձայն երգեալ,
Սարգսի դադաղաց նախընթաց եղեալ,
Կըրէաք ի ձեռս ըզկերոնս լուցեալ: